ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/272

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Միասնական սոցիալական ծառայություն
Մասնակից՝ «Բիգ Պլաստ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՄՍԾ ԷԱՃԱՊՁԲ-21/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, ախտահանիչ և պահպանիչ միջոցների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 01.10.2021թ.-ի թիվ 26/26-1/15925-2021 գրությամբ «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Միասնական սոցիալական ծառայության 25.09.2021թ.-ի թիվ 02/14-5/39565-2021 գրության հիման վրա, 01.10.2021թ.-ին «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 01.10.2021թ.-ին:

01.10.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/272 համարի ծածկագիրը:

29.09.2021թ.-ին և 29.10.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 29.09.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.10.2021թ.-ին:

2. <u>Միասնական սոցիալական ծառայության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

Միասնական սոցիալական ծառայությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 25.09.2021թ. թիվ 02/14-5/39565-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ 2021 թվականի սեպտեմբերի 6-ին Միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից ՄՄԾ ԷԱՃԱՊՁԲ-21/6 ծածկագրով հայտարարվել է Ծառայության կարիքների համար ախտահանիչ և պահպանիչ միջոցների գնման ընթացակարգ:

Գնման ընթացակարգի շրջանակում հայտեր են ներկայացրել թվով երեք կազմակերպություն՝ այդ թվում «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն): Հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություն Ընկերության ներկայացրած հայտում:

Գնահատող հանձնաժողովի 2021թ. սեպտեմբերի 16-ի որոշմամբ հանձնաժողովի նիստը կասեցվել է և հրավերով սահմանված կարգով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ժամանակ է տրվել անհամապատասխանությունը շտկելու համար, սակայն Ընկերությունը

որպես շտկված փաստաթուղթ ներկայացրել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից «ՀՀ ԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/70» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգին մասնակցության դիմում հայտարարությունը (հավելված 1-ը) և իրական շահառուի վերաբերյալ հայտարարագիրը:

Գնահատող հանձնաժողովի 2021թ. սեպտեմբերի 22-ի նիստի որոշմամբ մերժվել է «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ-ի հայտը ՄՄԾ ԷԱՃԱՊՁԲ-21/6 ծածկագրով հրավերի 8.11 կետով սահմանված պահանջների համաձայն, հետևյալ հիմնավորմամբ՝ հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՄՄԾ ԷԱՃԱՊՁԲ-21/6 ծածկագրով հրավերով սահմանված պայմաններին:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՄՄԾ ԷԱՃԱՊՁԲ-21/6» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն, 12.10.2021թ.-ին ներկայացրած թիվ 02/14-5/42671-2021 գրությամբ, հավելել է նաև հետևյալը.

««Թիվ ՍՑ-ԼՕ-2021/272» 2021 թվականի հոկտեմբերի 1-ի գրությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռած ընթացակարգի վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.

Գործի նախապատմությունը.

2021 թվականի սեպտեմբերի 6-ին Միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից ՄՄԾ ԷԱՃԱՊՁԲ-21/6 ծածկագրով հայտարարվել է Ծառայության կարիքների համար ախտահանիչ և պահպանիչ միջոցների գնման ընթացակարգ:

Գնման ընթացակարգի շրջանակում հայտեր են ներկայացրել թվով երեք կազմակերպություն՝ այդ թվում «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն):

Հայտի մերժման հիմք հանդիսացած էական նշանակություն ունեցող փաստերը և իրավական հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով:

Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 42-րդ կետի համաձայն՝ եթե Կարգ 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում՝ հայտը գնահատվում է անբավարար, և մերժվում է:

Գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվում են eauction.armeps.am համակարգով ներկայացված հայտերը՝ ՄՄԾ ԷԱՃԱՊՁԲ-21/6 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված կարգով:

Կարգի 15-րդ կետի համաձայն՝ Գնահատող հանձնաժողովի կազմում հանձնաժողովի անդամի կարգավիճակով չեն կարող ընդգրկվել գնումները համակարգողը, ինչպես նաև վերջինիս ներկայացուցիչը կամ աշխատակիցը:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություն Ընկերության ներկայացրած հայտում՝ ներկայացրած հայտի փաստաթղթերը տնօրենի փոխարեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացված է Անի Առաքելյանի կողմից, սակայն հայտով ներկայացված չէ վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթը, դիմում հայտարարությունը (հավելված 1) չի համապատասխանում ՄՄԾ ԷԱՃԱՊՁԲ-21/6 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված պահանջներին՝ հրավերի պահանջներին համապատասխան լրացված չէ թիվ 1 հավելվածի 2-րդ կետի ձևաչափով ներկայացված իրական շահառուի տվյալները, լրացված չէ իրական շահառուի վերաբերյալ ներկայացված հայտարարագրի 1.3.2 կետը, 4.6.2 կետը:

ՄՄԾ ԷԱՃԱՊՁԲ-21/6 ծածկագրով հրավերով սահմանված կարգով գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով և էլեկտրոնային աճուրդի հրավերի 8.11 կետով սահմանված պահանջների համաձայն համակարգի միջոցով

տեղեկացվել է մասնակցը՝ առաջարկելով մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընկերությունը որպես շտկված փաստաթուղթ ներկայացրել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից «ՀՀ ԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/70» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգին մասնակցության դիմում հայտարարությունը (հավելված 1-ը) և իրական շահառուի վերաբերյալ հայտարարագիրը:

Գնահատող հանձնաժողովի 2021թ. սեպտեմբերի 22-ի նիստի որոշմամբ մերժվել է «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ-ի հայտը՝ ՄՄԾ ԷԱՃԱՊՁԲ-21/6 ծածկագրով հրավերի 8.11 կետով սահմանված պահանջների համաձայն, հետևյալ հիմնավորմամբ՝ հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՄՄԾ ԷԱՃԱՊՁԲ-21/6 ծածկագրով հրավերով սահմանված պայմաններին:

Էլեկտրոնային աճուրդի հրավերի 8.11 կետի երկրորդ պարբերությամբ սահմանված պահանջների համաձայն՝ եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, ներառյալ եթե սույն հրավերով նախատեսված է հայտի ապահովման ներկայացման պահանջ և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտով ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, սակայն սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել դրա բնօրինակը, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Հետևաբար գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած որոշումները իրավաչափ են և համապատասխանում են գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:»:

3. <u>«Բիգ Պլաստ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 04.10.2021թ.-ի գրությամբ դիմել է «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.10.2021թ.-ի թիվ 26/26-1/15925-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Մասնակիցը, 08.10.2021թ.-ին ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ, հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ «Բիգ պլաստ» ՍՊԸ մասնակցել է Միասնական սոցիալական ծառայության կողմից հայտարարված ՄՍԾ ԷԱՃԱՊՁԲ-21/6 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 14.09.2021թ.: Սահմանված ժամկետում ընկերության կողմից ներկայացվել է մասնակցության հայտ: Հայտերի բացման արդյունքում, էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի 16.09.2021թ. N2 արձանագրությամբ արձանագրվել է, որ կազմակերպության կողմից ներկայացված հայտի փաստաթղթերը ենթակա են շտկման: Այդ նպատակով նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվել է և հրավերի 8.11 կետով սահմանված պահանջների համաձայն մինչև կասեցման ժամկետի ավարտը առաջարկվել է մասնակցին շտկել անհամապատասխանությունները: Փաստաթղթերի շտկման վերաբերյալ ծանուցումն ընկերությունը ստացել է 16.09.2021թ. ժամը 16:04՝ էլեկտրոնային փոստի և համակարգի միջոցով:

Ի պատասխան վերոնշյալ ծանուցման, ընկերությունը, նույն օրը կատարելով անհրաժեշտ շտկումները, սեղմ ժամկետում՝ մասնավորապես 16.09.2021թ. ժամը՝ 17:05 անհրաժեշտ փաստաթղթերը բեռնել է համակարգ, ինչպես նաև նույն օրը ժամը 17:15, մի քանի րոպեի տարբերությամբ, ուղարկել է հրավերում նշված էլեկտրոնային փոստի հասցեին gagik.janjughazyan@ssa.am, ով հանդիսանում է սույն գործընթացում գնահատող հանձնաժողովի քարտուղար, պատասխանատու և համակարգող անձ, վերջինս նաև իրազեկ է ամբողջական ընթացակարգի մասին: Արդյունքում, երկու եղանակով էլ ներկայացված փաստաթղթերը ստանալու և ուսումնասիրվելու էին գնահատող հանձնաժողովի կողմից, որի անդամ է հանդիսանում նաև Գագիկ Ջանջուղազյանը:

Գնահատող հանձնաժողովի 22.09.2021թ. N 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ համակարգի միջոցով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝ որպես շտկված փաստաթուղթ ներկայացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից «ՀՀ ԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/70» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգին մասնակցության դիմում հայտարարությունը և իրական շահառուի վերաբերյալ հայտարարագիրը: Արդյունքում ներկայացված

փաստաթղթերը գնահատվել են անբավարար, մինչդեռ փաստաթղթաշրջանառությունը մեր կողմից իրականացվել է ՀՀ օրենսդրության պահանջներով և ապահովել է պատշաճ ընթացակարգ:

Հայտնում ենք, որ մեր ընկերության կողմից փաստաթղթերի շտկումը և հանձնաժողովին ներկայացումը իրականացվել են պատշաճ ձևով և բավականին սեղմ ժամկետներում ինչպես համակարգի միջոցով, այնպես էլ էլեկտրոնային փոստին նամակի ուղարկման եղանակով, որոնք երկուսն էլ հանդիսանում են պաշտոնական ծանուցման միջոց:

Ընկերությունը երկար տարիներ մասնակցել է պետական գնումների գործընթացին, բարեխղճորեն և պատշաճ եղանակով կատարել պայմանագրային պարտավորությունները, պատվիրատու կողմին ընդառաջելով նույնիսկ սահմանված ժամկետից շուտ իրականացրել է նախատեսված մատակարարումները: Հետևաբար որևէ դիտավորություն ընկերության գործողություններում չի կարող դիտարկվել:

Հաշվի առնելով վերոնշյալ բոլոր հանգամանքները, խնդրում ենք ընկերության նկատմամբ նախաձեռնած գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընկերությունը ներառելու ընթացակարգը հետ կանչել կամ կասեցնել կամ դադարեցնել:

Սույն փաստաթղթին կցվում է գնահատող հանձնաժողովի՝ հրավերում նշված էլեկտրոնային փոստին շտկված փաստաթղթի ուղարկման փաստը հավաստող նամակի փոստից արտատպված տարբերակը:»:

4. <u>ՍՑ-LO-2021/272 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Միասնական սոցիալական ծառայության կողմից ախտահանիչ և պահպանիչ միջոցների ձեռքբերման նպատակով 09.09.2021թ.-ին հայտարարվել է «ՄՍԾ ԷԱՃԱՊՁԲ-21/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՄՍԾ ԷԱՃԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 16.09.2021թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտի փաստաթղթերը տնօրենի փոխարեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացված է Անի Առաքելյանի կողմից, սակայն հայտով ներկայացված չէ վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթը, դիմում հայտարարությունը (հավելված 1) չի համապատասխանում «ՄՍԾ ԷԱՃԱՊՁԲ-21/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված պահանջներին՝ հրավերի պահանջներին համապատասխան լրացված չէ հավելված 1-ի 2-րդ կետի ձևաչափով ներկայացված իրական շահառուի տվյալները, լրացված չէ իրական շահառուի վերաբերյալ ներկայացված հայտարարագրի 1.3.2 կետը և 4.6.2 կետը:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով Ընթացակարգի հրավերի 8.11 կետով, որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի 22.09.2021թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ուսումնասիրելով Մասնակցի կողմից սահմանված ժամկետում համակարգով հանձնաժողովին ներկայացված հայտով ներկայացրած փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակը, արձանագրել է, որ ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ որպես շտկված փաստաթուղթ ներկայացված է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից «ՀՀ ԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/70» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգին մասնակցության դիմում հայտարարությունը (հավելված 1-ը) և իրական շահառուի վերաբերյալ հայտարարագիրը:

vii. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները, քննարկման արդյունքում որոշել է մասնակցի ներկայացրած շտկված փաստաթղթերը գնահատել անբավարար:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.10.2021թ.-ի թիվ 26/26-1/15925-2021 գրությամբ «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները…..:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու

պարտականություն ունեցող իրավաբանական անձի դեպքում՝ հղում գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջին, իսկ այլ իրավաբանական անձանց դեպքում՝ գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60.3-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա սահմանված ձևով և կարգով: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Միասնական սոցիալական ծառայության կողմից ախտահանիչ և պահպանիչ միջոցների ձեռքբերման նպատակով 09.09.2021թ.-ին հայտարարված «ՄՍԾ ԷԱՃԱՊՁԲ-21/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.11-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Նույն կետի 2-րդ պարբերության համաձայն՝ եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, ներառյալ եթե սույն հրավերով նախատեսված է հայտի ապահովման ներկայացման պահանջ և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտով ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, սակայն սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել դրա բնօրինակը, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ

աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Միասնական սոցիալական ծառայության կողմից ախտահանիչ և պահպանիչ միջոցների ձեռքբերման նպատակով 09.09.2021թ.-ին հայտարարված «ՄՍԾ ԷԱՃԱՊՁԲ-21/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.09.2021թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտի փաստաթղթերը տնօրենի փոխարեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացված է Անի Առաքելյանի կողմից, սակայն հայտով ներկայացված չէ վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթը, դիմում հայտարարությունը (հավելված 1) չի համապատասխանում «ՄՍԾ ԷԱՃԱՊՁԲ-21/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված պահանջներին' հրավերի պահանջներին համապատասխան լրացված չէ հավելված 1-ի 2-րդ կետի ձևաչափով ներկայացված իրական շահառուի տվյալները, լրացված չէ իրական շահառուի վերաբերյալ ներկայացված հայտարարագրի 1.3.2 կետը, 4.6.2 կետը, ինչով պայմանավորված որոշում է կայացվել մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել

արձանագրված անհամապատասխանությունները, սակայն «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացրած փաստաթղթերը նույնպես չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝ որպես շտկված փաստաթուղթ ներկայացված է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից «ՀՀ ԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/70» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգին մասնակցության դիմում հայտարարությունը (հավելված 1-ը) և իրական շահառուի վերաբերյալ հայտարարագիրը:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները, քննարկման արդյունքում որոշել է մասնակցի ներկայացրած շտկված փաստաթղթերը գնահատել անբավարար:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող,

կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՄՍԾ ԷԱՃԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.10.2021թ.-ի թիվ 26/26-1/15925-2021 գրությամբ «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/272 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**